40 մրգաչատ. բայց մարդ չկայը, միայն պահապանք. եւ ասին թէ Ազպուս գեղն են, զի ամէն տարի կթոցն կ'երթան ի գեղն. եւ քաղաքն մէն կու մնայ որպէս Սիս: Եւ կայը մեծ եկեղեցի մի քարէ՝ Լուսաւորիչ անուն, եւ
45 իրեք քահանայ, հարիւր տուն հայ եւ լիութիւն, աժնութիւն առատ. Խ խիարն մէկ դրամ. Ե, Զ ձմերուկ մէկ դրամ. Դ հաց մէկ դրամ, չորս դրամ օխա մի միս: Կայը եւ գեղն եկեղեցի մի եւ Լ տուն հայ: Կացի անդ երկու
50 չարաթ վասն քարվանի: Բայց Տաճիկքն նորա խիստ քաղցը եւ մարդասէրք են եւ բարի, ոչ նման այլ Տաճկաց իժ եւ օձք, զի եւ կաւուր անդամ ոչ ասեն մեզ, այլ էսայի եւ յիսակուլի. եւ յոյժ պատուէին եւ սիրէին
55 զմեր աղն:

ԽԱՐԲԵՐԴ

Եւ անտի իրեք օրն եկաք ի ՇԻՐԱՔ որ է ԽԱՐԲԵՐԹ, որ է ի վրայ բարձր լերան: Եւ կայը ի նմա իրեք եկեղեցի Հայոց եւ հարիւր տուն հայի. եւ Տաճիկք յոյժ չար եւ
60 վատ եւ խստասիրտք. եւս առաւել Ենկիչարիքն՝ զի նոքա տիրապետել են զքաղաքն եւ տներն մեծամեծ չինեալ են որպէս սարայնի. ամէն մէկ մէկ պարոն մի են. զուլումն չատ. մարդ չիշխել բան մի ասել. վասն որոյ
65 Հայք սակաւ մնացեալ են: Եւ Սուրբ Յակոբայ եկեղեցին խիստ գօրաւոր է, որ եւ Տաճիկք

50 տաճիկն: — 62 չինելն: